



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 34-Ն

«07» սեպտեմբերի 2022 թ.

**0-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի պահանջը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել 0-6 տարեկան երեխաների կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

X

ԿԱՐԳ

0-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով կարգավորվում են 0-6 տարեկան երեխայի կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները:

2. 0-6 տարեկան երեխայի կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման համար հիմք է հանդիսանում երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) գնահատումը:

3. 0-6 տարեկան երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում են «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

2. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում

4. Երեխայի ԿԶԱՊԿ-ի գնահատումն (այսուհետ՝ Գնահատում) իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝

1) երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանները՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ.

2) սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը.

3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների (այսուհետ՝ ՄՀ ծառայություն) մակարդակը, ծավալները և տևողությունը:

5. Գնահատումն իրականացվում է երեք մակարդակներում՝

1) Նախադպրոցական մակարդակի Գնահատում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՆՈՒՀ) մանկավարժական աշխատողների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի (այսուհետ՝ ՄՀ աջակցության խումբ) կողմից (առկայության դեպքում)։

2) Տարածքային մակարդակի Գնահատում՝ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (այսուհետ՝ ՏՄԱԿ) մասնագետների կողմից։

3) Հանրապետական մակարդակի Գնահատում՝ բողոքարկված դեպքերի գնահատում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (այսուհետ՝ ՀՄԿ) մասնագետների կողմից:

3. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում նախադպրոցական մակարդակում

6. Երեխայի Գնահատման գործընթացը Նախադպրոցական մակարդակում իրականացվում է ցանկացած տարիքում, երբ երեխայի մոտ նախադպրոցական ուսումնական գործընթացում դիտվում են գործունեության տարբեր ձևերում մասնակցության և զարգացման կայուն դժվարություններ:

7. Եթե նախադպրոցական կրթության ցանկացած փուլում երեխայի մոտ նկատվում են կայուն դժվարություններ, որոնց հետևանքով երեխան չի կարողանում արդյունավետ մասնակցություն ունենալ ուսումնական գործընթացում, ապա մանկավարժական աշխատողը ծնողի գրավոր համաձայնությամբ գրավոր դիմում է ՆՈՒՀ-ի տնօրենին՝ իրականացնելու երեխայի Նախադպրոցական մակարդակի Գնահատում (Ձև 1):

8. Տնօրենի հրամանով հանձնարարվում է համապատասխան մանկավարժական աշխատողներին և ՄՀ աջակցության խմբին իրականացնել երեխայի Նախադպրոցական մակարդակի Գնահատում: Նախադպրոցական մակարդակում մանկավարժական աշխատողները և ՄՀ աջակցության խումբը, համագործակցելով երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի (այսուհետ՝ ծնող) հետ, իրականացնում են Գնահատում Նախադպրոցական մակարդակում:

9. Նախադպրոցական մակարդակի գնահատման ընթացքում հաստատության մանկավարժական աշխատողների և ՄՀ աջակցության խմբի կողմից (առկայության դեպքում) բացահայտվում են երեխայի զարգացման առանձնահատուկ կարիքները, ինչպես նաև միջավայրային խթանող կամ խոչընդոտող գործոնները, որոնք ազդեցություն են ունենում նրա՝ կրթության և զարգացման գործընթացին արդյունավետ մասնակցության վրա:

10. Գնահատման փուլը, որը ներառում է երեխայի ծնողի, մանկավարժական աշխատողների և այլ մանկավարժահոգեբանական աշխատողների դիտարկման և համապատասխան գնահատման

գործիքների կիրառման արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն, տևում է 10-15 աշխատանքային օր՝ տնօրենի հրամանին հաջորդող օրվանից սկսած:

11. Եթե երեխայի Նախադպրոցական մակարդակի Գնահատման եզրակացությունը (Ձև 2) վկայում է երեխայի գործունեության որևէ ոլորտի թեթև աստիճանի խանգարման մասին, ապա մանկավարժական աշխատողները և ՄՀ աջակցության խումբը, համագործակցելով երեխայի ծնողների հետ, մշակում են Կանխարգելիչ միջամտությունների պլան (Ձև 3)՝ ՄՀ ծառայությունների տրամադրման և միջավայրային հարմարեցումների վերաբերյալ (ուսուցման և դաստիարակության մեթոդներ, կարիքին համապատասխան վերադասավորումներ, ժամանակի կազմակերպում և այլն):

4. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում Տարածքային մակարդակում

12. Եթե երեխայի Նախադպրոցական մակարդակի Գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է երեխայի գործունեության որևէ ոլորտի միջին, ծանր կամ խոր աստիճանի խանգարման մասին, ապա հաստատությունը ծանուցում է ծնողին այդ մասին (Ձև 4) և ծնողի համաձայնությամբ, դիմում է ՏՄԱԿ-ին՝ իրականացնելու Տարածքային մակարդակի Գնահատում (Ձև 5):

13. Երեխային Տարածքային մակարդակի Գնահատման ներկայացնելու համար ՆՈՒՀ-ը կազմում է հետևյալ փաստաթղթերի փաթեթը՝

- 1) ծնողի անձնագրի և երեխայի ծննդյան վկայականի պատճենները,
- 2) երեխայի հանրային ծառայության համարանիշը (առկայության դեպքում),
- 3) ծնողի հանրային ծառայության համարանիշը (առկայության դեպքում),
- 4) երեխայի անձնական գործի առաջին էջի պատճենը՝ լուսանկարով,
- 5) Նախադպրոցական մակարդակի գնահատման եզրակացությունը,
- 6) երեխայի առողջական վիճակի մասին վկայող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- 7) Կանխարգելիչ միջամտությունների պլանը՝ առկայության դեպքում,
- 8) Անհատական ուսուցման և զարգացման պլանը (այսուհետ՝ ԱՈՒԶՊ)՝ առկայության դեպքում

(Ձև 13),

9) առկայության դեպքում այլ փաստաթղթեր, որոնք կնպաստեն երեխայի կարիքի ճիշտ գնահատմանը:

14. Երեխայի Տարածքային մակարդակի Գնահատումն իրականացվում է ՏՄԱԿ-ի կողմից՝ որոշելու երեխայի ԿԶԱՊԿ-ի աստիճանը և տեսակը:

15. Հաջորդ՝ կրկնակի Գնահատումն իրականացվում է դպրոցին նախապատրաստման տարեսկզբում (ավագ խումբ)՝ մինչև ուսումնական տարվա առաջին կիսամյակի ավարտը: Կրկնակի Գնահատման գործընթացն իրականացվում է Տարածքային մակարդակից սկսած՝ բաց թողնելով գնահատումը Նախադպրոցական մակարդակում:

16. Այն դեպքում, երբ որևէ ուսումնական տարվա ավարտին ԱՈՒԶՊ-ով իրականացված աշխատանքների ամփոփման ժամանակ համապատասխան մանկավարժական աշխատողների և ՄՀ աջակցող խմբի կողմից կայացվում է որոշում երեխայի ԿԶԱՊԿ-ի աստիճանի փոփոխության

անհրաժեշտության մասին, որն արձանագրվում է ԱՌԻԶՊ-ի համապատասխան բաժնում, ՆՈՒՀ-ի տնօրենը, ծնողի դիմումի համաձայն դիմում է ՏՄԱԿ՝ երեխայի ԿԶԱՊԿ-ի Վերագնահատման նպատակով:

17. Հաստատության կողմից դիմումը (Ձև 5) և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ստանալուց հետո, ՏՄԱԿ-ը նշանակում է երեխայի Տարածքային մակարդակի Գնահատումը սկսելու օրը՝ առավելագույնը 10 աշխատանքային օր ժամկետում, որի մասին տեղեկացնում է հաստատությանը:

18. Տարածքային մակարդակի Գնահատում կարող է իրականացվել նաև անմիջականորեն ծնողի դիմումի հիման վրա, եթե երեխան որևէ ՆՈՒՀ-ում ընդգրկված չէ (Ձև 6):

19. ՏՄԱԿ-ի տնօրենի հրամանով ձևավորվում է ՆՈՒՀ-ում տվյալ երեխայի Տարածքային մակարդակի Գնահատումն իրականացնող մանկավարժահոգեբանական աշխատողների խումբ, որը ներառում է ՏՄԱԿ-ի առնվազն 3 մասնագետ՝ հատուկ մանկավարժ, հոգեբան և սոցիալական մանկավարժ: Գնահատող խմբի կազմը ձևավորվում է հիմք ընդունելով Նախադպրոցական մակարդակի գնահատման եզրակացությունը, իսկ կրկնակի գնահատման դեպքում՝ երեխայի ԱՌԻԶՊ-ը: Անհրաժեշտության դեպքում երեխային գնահատողների խմբում ներառվում են նաև երեխայի կարիքին համապատասխան մասնագետներ՝ լոգոպեդ, տիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ, էրգոթերապիստ:

20. Երեխայի՝ որևէ ՆՈՒՀ-ում ընդգրկված լինելու դեպքում տարածքային մակարդակի Գնահատմանը մասնակցում են նաև այդ ուսումնական հաստատության ՄՀ աջակցության խումբը (առկայության դեպքում), երեխայի հետ աշխատող մանկավարժական աշխատողները: Տարածքային մակարդակի Գնահատմանը մասնակցում են նաև երեխան և նրա ծնողը:

21. ՏՄԱԿ-ի կողմից երեխայի Տարածքային մակարդակի Գնահատման գործընթացը համակարգում է ՏՄԱԿ-ի տնօրենի տեղակալը՝ գնահատումը սկսելու օրվանից:

22. ՏՄԱԿ-ի կողմից երեխայի Տարածքային մակարդակի Գնահատումը սկսվում է դիմում ստանալուց հետո առավելագույնը 15-րդ աշխատանքային օրը և տևում է նվազագույնը 5 աշխատանքային օր, առավելագույնը՝ 20 աշխատանքային օր:

23. Տարածքային մակարդակի Գնահատումն իրականացնելուց հետո՝ առնվազն 5-օրյա ժամկետում, Գնահատում իրականացրած ՏՄԱԿ-ի մասնագետները կազմում են երեխայի Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի տարածքային մակարդակի գնահատման արձանագրություն (Ձև 7) և Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացություն (Ձև 8) ու ներկայացնում ՏՄԱԿ-ի տնօրենի հաստատմանը:

24. ՏՄԱԿ-ի տնօրենի կողմից հաստատված Տարածքային մակարդակի Գնահատման եզրակացության և Գնահատման արձանագրության մեկ օրինակը պահվում է ՏՄԱԿ-ում, իսկ մեկը՝ տրվում է երեխայի ծնողին:

25. Գնահատման արդյունքների հետ համաձայնության դեպքում ծնողը, Գնահատման արձանագրությունը և Գնահատման եզրակացությունը ներկայացնում է իր երեխայի հաճախած ուսումնական հաստատության տնօրենին:

26. Երեխայի Տարածքային մակարդակի Գնահատման եզրակացությունը ծնողի կողմից ստանալուց հետո, առավելագույնը 5-օրյա ժամկետում, ուսումնական հաստատության տնօրենը դիմում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմին՝ վկայագրելու երեխայի

ԿԶԱՊԿ-ը: Եթե երեխան ընդգրկված չէ որևէ ՆՈՒՀ-ում, ապա երեխայի ծնողն ինքն է դիմում Տարածքային կառավարման պետական մարմին՝ վկայագրելու երեխայի ԿԶԱՊԿ-ը: ԿԱՊԿ ունեցող երեխաների Տեղեկատվական համակարգի ամբողջական գործարկման դեպքում երեխայի Տարածքային մակարդակի գնահատման եզրակացությունն ինքնաշխատ եղանակով փոխանցվում է Տարածքային կառավարման պետական մարմին՝ վկայագրելու երեխայի ԿԶԱՊԿ-ը, այնուհետև նույն կերպ վկայագիրը փոխանցվում է ՏՄԱԿ-ին, որն էլ փոխանցում է համապատասխան ուսումնական հաստատությանն ու ծնողին:

27. Տարածքային մակարդակի Գնահատման արդյունքում երեխայի ԿԶԱՊԿ-ը չճանաչելու դեպքում, Գնահատում իրականացրած ՏՄԱԿ-ի մասնագետները կարող են առաջարկել ուսումնական հաստատությանը երեխայի աջակցությունը կազմակերպել Կանխարգելիչ միջամտությունների պլանով:

5. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում Հանրապետական մակարդակում

28. Տարածքային մակարդակի Գնահատման արդյունքները, Ծնողի կամ ՆՈՒՀ-ի կողմից Գնահատման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում, կարող են բողոքարկվել Հանրապետական մակարդակում՝ ներկայացնելով երեխայի Կրթության եվ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների բողոքարկման գրավոր դիմում (Ձև 9):

29. Բողոքները պետք է ներկայացվեն ՀՄԿ՝ Տարածքային մակարդակի Գնահատման եզրակացությունը ստանալուց ոչ ուշ քան 10-օրյա ժամկետում:

30. ՀՄԿ տնօրենի հրամանով ձևավորված, առնվազն 3 մասնագետից բաղկացած, մասնագիտական խումբն իրականացնում է գնահատման փաստաթղթերի ուսումնասիրություն և կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

- 1) Երեխայի կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման եզրակացությունը անփոփոխ թողնելու մասին, կամ
- 2) Երեխայի կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների գնահատման եզրակացությունը Տարածքային կենտոնի կողմից վերանայելու մասին:

31. Հանրապետական մակարդակում իրականացվող գնահատման ժամկետները նույնն են, ինչ Տարածքային մակարդակի գնահատման ժամկետները:

6. ՄՀ ծառայությունների տրամադրումը Նախադպրոցական մակարդակում

32. Նախադպրոցական մակարդակում ՄՀ ծառայությունները տրամադրվում են այն երեխաներին, ովքեր տվյալ մակարդակում սահմանված կարգով գնահատվել են և հաստատվել է, որ ունեն մանկավարժահոգեբանական աջակցության կարիք:

33. Նախադպրոցական մակարդակում ՄՀ ծառայությունները տրամադրվում են ՆՈՒՀ-ի մանկավարժների և ՄՀ աջակցության խմբի միջոցով: Եթե հաստատությունում չկան անհրաժեշտ մասնագետները, ապա նրանք համապատասխան հայտով (Ձև 11) հրավիրվում են տվյալ

հաստատությունը սպասարկող Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնից: ՏՄԱԿ-ի մասնագետները՝ երեխային հետազոտելուց հետո, կարիքի դեպքում կազմակերպում են ՄՀ ծառայության տրամադրումը:

34. Նախադպրոցական մակարդակում ՄՀ ծառայությունները տրամադրվում են Նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների ամփոփումից հետո՝ Կանխարգելիչ միջամտությունների պլանով:

1) ՆՈՒՀ-ում Նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքում երեխայի գործունեության որևէ ոլորտի թեթև աստիճանի խանգարում հայտնաբերելու դեպքում մանկավարժական աշխատողները և ՄՀ աջակցության խումբը երեխայի ծնողի մասնակցությամբ առավելագույնը 15-օրյա ժամկետում մշակում են երեխայի Կանխարգելիչ միջամտությունների պլանը (Ձև 3): Կանխարգելիչ միջամտությունների պլանում ներառվում են ՄՀ ծառայությունների տեսակը, ժամանակահատվածը, տևողությունն ու ծավալները: Յուրաքանչյուր ՄՀ ծառայության ծավալը կազմում է շաբաթական 45 րոպե:

2) Երեխային տրամադրվող ՄՀ ծառայությունների ժամանակացույցը հաստատում է ՆՈՒՀ-ի տնօրենը և պատճենը տրամադրում երեխայի ծնողին:

35. Կանխարգելիչ միջամտությունների պլանը մշակվում և իրականացվում է ՆՈՒՀ-ի մանկավարժների կողմից մեկ կիսամյակի համար: Այն դեպքում, երբ երեխան ունի ՄՀ ծառայությունների կարիք, ապա Կանխարգելիչ միջամտությունների պլանի մշակմանն ու իրականացմանը մասնակցում է նաև երեխայի ՄՀ աջակցության խումբը:

36. Նախադպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող յուրաքանչյուր երեխային տրամադրվող ՄՀ ծառայությունների ժամանակահատվածը, տևողությունը, ծավալը, ծառայության տեսակը և տրամադրման գրաֆիկը մշակվում է Նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների հիման վրա՝ ՆՈՒՀ-ի և ՏՄԱԿ-ի ՄՀ աջակցության խմբի կողմից և հաստատվում է ՆՈՒՀ-ի տնօրենի կողմից:

37. ՄՀ ծառայությունների տրամադրման արդյունավետության և որակի ապահովման համար պատասխանատվությունը կրում է ՆՈՒՀ-ը՝ ի դեմս երեխայի ՄՀ աջակցության խմբի:

38. ՆՈՒՀ-ը ՏՄԱԿ-ին և լիազոր մարմնին կիսամյակը մեկ տեղեկատվություն է ներկայացնում Նախադպրոցական մակարդակում Կանխարգելիչ միջամտությունների պլանով ՄՀ ծառայություններ ստացող երեխաների մասին (քանի երեխա է ստանում աջակցություն, քանի երեխա այլևս չունի աջակցության կարիք, քանի երեխայի գործ է փոխանցվել Տարածքային մակարդակ): Հաշվետվություն չներկայացնելու դեպքում ՆՈՒՀ-ի տնօրենի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կարող է կիրառվել կարգապահական տույժ:

39. ՏՄԱԿ-ը յուրաքանչյուր եռամսյակ իրականացնում է այցեր ՆՈՒՀ՝ Նախադպրոցական մակարդակում իրականացվող աշխատանքները մշտադիտարկելու նպատակով (փաստաթղթային փաթեթ և իրականացվող աշխատանքներ): Իրականացվող մշտադիտարկումների ժամանակ ՏՄԱԿ-ի աշխատակիցները նաև ուշադրության կենտրոնում են պահում ՆՈՒՀ-ի բոլոր երեխաներին՝ Նախադպրոցական մակարդակում երեխաների խնդիրների և դժվարությունների վաղ հայտաբերման նպատակով:

40. ՄՀ աջակցության խմբի կազմում ընդգրկվում են ՆՈՒՀ-ի երեխային հետ աշխատող մանկավարժական աշխատողները և բուժքույրը:

41. Նախադպրոցական մակարդակում մանկավարժները և ՄՀ աջակցության խումբը համագործակցելով երեխայի ծնողների հետ՝ իրականացնում են Կանխարգելիչ միջամտությունների պլանով նախատեսված գործողությունները՝ աջակցելով երեխային, նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրերի բովանդակությունը հասակակիցների հետ զուգընթաց յուրացնելու գործընթացում:

42. ՄՀ ծառայությունները երեխային տրամադրվում են ուսումնական պարապմունքներից հետո՝ ըստ որոշված ծավալի և տևողության, սակայն օրական 1,5 ժամից ոչ ավելի:

43. ՄՀ աջակցության խումբը ուսումնական պարապմունքների ընթացքում իրականացնում է դիտարկումներ, խորհրդատվություն է տալիս մանկավարժական աշխատողներին պարապմունքների պլանավորման վերաբերյալ (նախադպրոցական ուսուցման ռազմավարություններ, մեթոդներ, երեխայի մասնակցությունը բարձրացնող առաջարկություններ), իրականացնում է երեխայի Կանխարգելիչ միջամտությունների պլանով նախատեսված ՄՀ ծառայությունների տրամադրման այլ աշխատանքներ:

44. Յուրաքանչյուր ամիս ՄՀ աջակցության խումբը և մանկավարժական աշխատողները Կանխարգելիչ միջամտությունների պլանում արձանագրում են իրականացված աշխատանքները՝ երեխայի հաջողություններն ու դժվարությունները, իսկ կիսամյակի ավարտին Կանխարգելիչ միջամտությունների պլանի համապատասխան բաժնում գնահատում են ստացված արդյունքները:

45. ՆՈՒՀ-ի տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալն առնվազն ամիսը մեկ անգամ հրավիրում է տվյալ երեխայի հետ աշխատող մանկավարժական աշխատողների և ՄՀ աջակցության խմբի անդամների հանդիպում՝ ամփոփելու տվյալ ամսվա ընթացքում երեխայի Կանխարգելիչ միջամտությունների պլանով նախատեսված աշխատանքների, այդ թվում՝ ՄՀ ծառայությունների արդյունքները: Անհրաժեշտության դեպքում հանդիպմանը կարող են հրավիրվել երեխայի ծնողն ու ՏՄԱԿ-ի մասնագետները:

46. Երեխայի Կանխարգելիչ միջամտությունների պլանով նախատեսված արդյունքների ամփոփումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, որը նկարագրական տեսքով տրամադրվում է ծնողին:

47. Կիսամյակի ավարտին Կանխարգելիչ միջամտությունների պլանի ամփոփման արդյունքում թիմը որոշում է կայացնում հաջորդ կիսամյակում երեխայի կրթության կազմակերպման վերաբերյալ՝

- 1) շարունակել երեխայի ՄՀ աջակցությունը Կանխարգելիչ միջամտությունների պլանով,
- 2) կրթությունը կազմակերպել նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչների և ծրագրերի համապատասխան՝ առանց հարմարեցումների,
- 3) Տարածքային մակարդակի գնահատման նպատակով իրականացնել նախախաղաղական մակարդակի գնահատում:

7. ՄՀ ծառայությունների տրամադրումը Տարածքային մակարդակում

48. Տարածքային մակարդակում ծառայությունները տրամադրվում են այն երեխաներին, ովքեր տվյալ մակարդակում սահմանված կարգով գնահատվել և ճանաչվել են որպես ԿԶԱՊԿ ունեցող: Երեխայի ԿԶԱՊԿ-ի Տարածքային մակարդակի գնահատման արդյունքում՝

Ծառայությունների ժամկետային և ծավալային ցուցանիշներին համապատասխան առաջարկվում են երեխայի համար անհրաժեշտ անհատական ուսուցման եվ զարգացման պլանով նախատեսվող աջակցող ծառայությունների տեսակը, տևողությունն ու ծավալները (Ձև 10):

49. Տարածքային մակարդակում ծառայությունները տրամադրվում են ՏՄԱԿ-ի կողմից: Հնարավոր է նաև ՄՀ ծառայությունների տրամադրման զուգակցված տարբերակը, որի դեպքում երեխայի համար առաջարկված ծառայությունների այն տեսակները, որոնք առկա են ՆՈՒՀ-ում, տրամադրվում են ՆՈՒՀ-ի մասնագետների կողմից, իսկ մնացած ծառայությունները՝ ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից:

50. Տարածքային մակարդակում ՄՀ ծառայությունները տրամադրվում են երեխային մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման վերաբերյալ հայտ ՆՈՒՀ-ի հայտի (Ձև 11) կամ երեխայի ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) երեխային տարածքային մակարդակում մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրման վերաբերյալ դիմումի հիման վրա, եթե երեխան որևէ ՆՈՒՀ չի հաճախում (Ձև 12): Դիմումը ստանալու օրվանից հետո առավելագույնը 15-օրյա ժամկետում, ՄՀ աջակցության խումբը և մանկավարժական աշխատողը՝ ծնողի մասնակցությամբ, մշակում են երեխայի ԱՌԻԶՊ-ն (Ձև 13), որը մուտքագրվում է Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալների տեղեկատվական համակարգ: Երեխայի ԱՌԻԶՊ-ի մշակումից հետո, 5-օրյա ժամկետում, ՏՄԱԿ-ի և ՆՈՒՀ-ի տնօրենները համատեղ ստորագրում և վավերացնում են երեխայի ԱՌԻԶՊ-ն, այդ թվում երեխային տրամադրվող ՄՀ ծառայությունների տեսակները, ժամանակահատվածը, տևողությունն ու ծավալները և ՏՄԱԿ-ի մասնագետների՝ ՆՈՒՀ հաճախելու ժամանակացույցը:

51. ՄՀ ծառայությունները երեխային տրամադրվում են ուսումնական պարապմունքներից հետո՝ ըստ որոշված ծավալի և տևողության, սակայն օրական 1,5 ժամից ոչ ավելի:

52. Եթե երեխային տրամադրվող ՄՀ ծառայությունը պահանջում է համապատասխան հարմարեցված տարածք, սարքավորումներ և գույք, որոնք առկա չեն հաստատությունում, ապա ՏՄԱԿ-ը կարող է, ծնողի համաձայնությամբ, ԱՌԻԶՊ-ով նախատեսված ՄՀ ծառայությունները երեխային տրամադրել կենտրոնում:

53. ՏՄԱԿ-ում ՄՀ ծառայությունների տրամադրումը երեխային իրականացվում է անվճար, ՏՄԱԿ-ի միջոցներով, ուսումնական պարապմունքներից հետո, ըստ նախատեսված տևողության, ծավալի և երեխայի ԱՌԻԶՊ-ում նշված ժամանակացույցի:

54. Այն դեպքերում, երբ ծնողն առանց հիմնավոր պատճառի հրաժարվում է իր երեխային տրամադրվող ՄՀ ծառայություններից, իսկ երեխայի նախադպրոցական կրթությունն անհնար է պատշաճ կերպով իրականացնել առանց այդ ծառայությունների, ՆՈՒՀ-ը կարող է դիմել Խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ երեխայի շահերը պաշտպանելու նպատակով:

55. ՄՀ ծառայությունների տրամադրման ժամանակացույցը որոշվում է հաշվի առնելով երեխայի ֆիզիկական և մտավոր կարողությունների և աշխատունակության մակարդակը: Այն դեպքերում, երբ երեխայի մասնակցությունը բոլոր ուսումնական պարապմունքներին, ելնելով նրա աշխատունակությունից և ԿԶԱՊԿ-ի ծանրության աստիճանից, անհնար է, անարդյունավետ կամ նպատակահարմար չէ, ուսումնական հաստատությունը կարող է մանկավարժական խորհրդում

քննարկելուց հետո որոշում կայացնել ՄՀ ծառայությունները տրամադրել նաև ուսումնական պարապմունքների ժամերի ընթացքում՝ ամրագրելով դա երեխայի ԱՌԻԶՊ-ում:

56. Երեխայի ԱՌԻԶՊ-ում նշված ժամանակացույցին համապատասխան ՏՄԱԿ-ի մասնագետների այցերն արձանագրվում են ՆՈՒՀ-ի տնօրենի ուսումնական գծով տեղակալի կողմից՝ այդ նպատակով մշակված այցելությունների գրանցամատյանում (Ձև 14):

57. Ուսումնական հաստատության և ՏՄԱԿ-ի տնօրենի տեղակալները, առնվազն երկու ամիսը մեկ անգամ, հրավիրում են տվյալ երեխայի մանկավարժներին և ՄՀ ծառայություն տրամադրող ՄՀ աջակցության խմբի մասնագետներին՝ ամփոփելու տվյալ ժամանակահատվածում ԱՌԻԶՊ-ով նախատեսված աշխատանքների արդյունքները: Ցանկալի է, որ հանդիպմանը հրավիրվի նաև երեխայի ծնողը: Այս հանդիպումներն առավել նպատակահարմար է իրականացնել ՆՈՒՀ-ում:

58. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին երեխայի ՄՀ աջակցող խումբը և մանկավարժները՝ ծնողի մասնակցությամբ ամփոփում են երեխայի ԱՌԻԶՊ-ով նախատեսված գործողությունների արդյունքները և անհրաժեշտության դեպքում, վերանայում ԱՌԻԶՊ-ով սահմանված կարճաժամկետ նպատակները, գործողությունները, ինչպես նաև աշխատանքների ծավալները:

59. ՏՄԱԿ-ը երեխայի կրթության կազմակերպման վերաբերյալ անհրաժեշտ խորհրդատվություն և մասնագիտական աջակցություն է տրամադրում երեխայի ծնողին, ՆՈՒՀ-ի ՄՀ աջակցության խմբի անդամներին և մանկավարժական աշխատողներին՝ ապահովելով ծնողի, մասնագետների և մանկավարժական աշխատողների միջև մշտական կապ (փոխադարձ այցելություններ, հեռահաղորդակցություն, առցանց խորհրդատվություն): Մանկավարժական աշխատողներին տրամադրվող խորհրդատվությունն առավելապես պետք է ուղղված լինի երեխայի՝ ուսումնական գործընթացում մասնակցության բարձրացմանը, ուսուցման ռազմավարությունների և վարքի կարգավորման մոտեցումների ընտրությանը:

60. ՆՈՒՀ-ը երեխայի ԿԶԱՊԿ-ի աստիճանին համապատասխան ֆինանսավորման բարձրացված չափաքանակից գոյացած ֆինանսական միջոցներն ուղղորդում է տվյալ երեխայի ԿԶԱՊԿ-ին համապատասխան հարմարեցումների ապահովման վրա:

61. ՏՄԱԿ-ը յուրաքանչյուր եռամսյակ իրականացնում է այցեր ՆՈՒՀ՝ Տարածքային մակարդակում իրականացվող ՄՀ ծառայությունները մշտադիտարկելու նպատակով (փաստաթղթային փաթեթ և իրականացվող աշխատանքներ): Մշտադիտարկումներն իրականացվում են ինչպես ուսումնական գործընթացում երեխայի մասնակցությունը գնահատելու, այնպես էլ հաստատության ՄՀ աջակցության խմբի մասնագետների կողմից իրականացվող աշխատանքները գնահատելու նպատակով: Իրականացված մշտադիտարկման արդյունքներն ամփոփվում են նախադպրոցական ուսումնական հաստատության կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցությունների տրամադրման գործընթացի մշտադիտարկման թերթիկ համապատասխան ձևաթղթում (Ձև 15) և վերլուծության արդյունքում մշակվում են հաստատության հետագա խորհրդատվական աշխատանքների ուղղությունները:

62. Երեխաների մասին հավաքագրված տեղեկատվությունը, թե՛ ԿԶԱՊԿ-ի գնահատման, թե՛ ՄՀ ծառայությունների տրամադրման վերաբերյալ, ՏՄԱԿ-ի համապատասխան աշխատակիցը 10-օրյա ժամկետում մուտքագրում է Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների Տեղեկատվական համակարգ:

63. Այն դեպքերում, երբ Տարածքային մակարդակի գնահատման արդյունքում որոշվել է երեխայի ԿԶԱՊԿ-ը, սակայն ծնողն առանց հիմնավոր պատճառի հրաժարվում է ՄՀ ծառայություններից, ապա ՆՈՒՀ-ը կարող է դիմել համայնքում գործող Խնամակալության և հոգաբարձության մարմինն՝ երեխայի շահերը պաշտպանելու նպատակով:

8. Անհատական ուսուցման և զարգացման պլան

64. ԱՌԻԶՊ-ն նախադպրոցական կրթության պետական չափորոշի, կրթական ծրագրերի և երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության տարեկան և կարճաժամկետ նպատակները, դրանց հասնելու գործողությունները (կարիքի դեպքում՝ նաև աջակցող ծառայությունները) և ժամկետները՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշում և կրթական ծրագրերում սահմանված վերջնարդյունքները երեխային հասանելի դարձնելու համար (Ձև 13):

65. ԱՌԻԶՊ-ը մշակվում է ուսումնական հաստատության և ՏՄԱԿ-ի կողմից, եթե Տարածքային մակարդակի գնահատման արդյունքում պարզվել է, որ երեխան ունի ԿԶԱՊԿ: ԱՌԻԶՊ-ն մշակվում է ԿԶԱՊԿ ունեցող յուրաքանչյուր երեխայի համար՝ մեկ ուսումնական տարվա համար:

66. ԱՌԻԶՊ-ում կրթական ծրագրերի հարմարեցում իրականացվում է ԿԶԱՊԿ ունեցող այն երեխաների համար, ովքեր չեն կարողանում բավարարել նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջները: ԿԶԱՊԿ ունեցող այն երեխաների համար, ովքեր կարողանում են յուրացնել նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջները, ԱՌԻԶՊ-ում սահմանվում են ԿԶԱՊԿ-ին համապատասխան առանձնահատուկ պայմանները, միջավայրային հարմարեցումները և ՄՀ ծառայությունների պլանավորումը: ԱՌԻԶՊ-ում արձանագրվում են երեխային տրամադրվող համապատասխան մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ծավալները, տևողությունն ու ժամանակահատվածը:

67. ԱՌԻԶՊ-ի մշակումը համագործակցային գործընթաց է, որն իրականացնում են երեխայի հետ աշխատող մանկավարժական աշխատողները և ՄՀ ծառայություններ տրամադրող մասնագետները: ԱՌԻԶՊ-ի մշակմանը մասնակցում է երեխայի ծնողը: ԱՌԻԶՊ-ն մշակելուց հետո ծնողն իր ստորագրությամբ հաստատում է, որ մասնակցել է այդ փաստաթղթի մշակմանը:

68. Երեխայի ԱՌԻԶՊ-ի կազմման համար առաջնային պատասխանատվությունը կրում է ՆՈՒՀ-ի տնօրենը, ով ապահովում է ծնողի մասնակցությունն ԱՌԻԶՊ-ի մշակման վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելու գործընթացին և երեխայի ԱՌԻԶՊ-ի իրականացման համար անհրաժեշտ ՄՀ աջակցության, հարմարեցված նյութերի և պարագաների տրամադրումը:

69. ՆՈՒՀ-ի տնօրենի ուսումնական գծով տեղակալը համակարգում է ԱՌԻԶՊ-ի մշակման, իրականացման և ԱՌԻԶՊ-ում ներգրավված բոլոր կողմերի միջև արդյունավետ և համագործակցային աշխատանքները:

70. Երեխայի ԱՌԻԶՊ-ով պլանավորված կրթական ծրագրի բաժինների հարմարեցման, իրականացման և արդյունքների գնահատման համար առաջնային պատասխանատվություն են կրում երեխայի հետ աշխատանք տանող մանկավարժական աշխատողները:

71. ՄՀ աջակցության խումբը (հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական մանկավարժ) իր կողմից իրականացվող աշխատանքները պլանավորում է ԱՌԻԶՊ-ի համապատասխան բաժնում: ՄՀ աջակցության կողմից սահմանված նպատակները պետք է համահունչ լինեն մանկավարժական աշխատողների կողմից սահմանված նպատակներին:

72. Ծնողն ԱՌԻԶՊ-ի համագործակցային թիմի անդամ է: Նրա ներգրավվածությունը պետք է սկսվի իր երեխայի համար իրատեսական և նպատակահարմար անհատական ծրագրի վերաբերյալ որոշումների կայացման փուլից և շարունակվի ԱՌԻԶՊ-ի մշակման և դրա իրականացման փուլերում:

73. Երեխայի մասնակցությունն ԱՌԻԶՊ-ի մշակման գործընթացին ցանկալի է:

74. Երեխայի ԱՌԻԶՊ-ում սահմանված տարեկան և կարճաժամկետ նպատակներն ուսումնական տարվա ընթացքում ցանկացած ժամանակ կարող են ենթարկվել անհրաժեշտ փոփոխությունների:

75. Ելնելով ԱՌԻԶՊ-ում սահմանված տարեկան և կարճաժամկետ նպատակներից՝ երեխայի ցուցաբերած առաջադիմությունը պարբերաբար գնահատվում է ողջ տարվա ընթացքում ամփոփիչ աշխատանքների միջոցով, նույն հաճախականությամբ, ինչ նախատեսվում է առանց ԱՌԻԶՊ-ի երեխաների համար:

76. ԱՌԻԶՊ-ում արձանագրվում են նաև երեխայի նախադպրոցական կրթական առաջընթացի գնահատման համար անհրաժեշտ հարմարեցումները:

77. Երեխայի կրթական առաջընթացը գնահատվում է երեխայի կարողությունների և հնարավորությունների հիման վրա և ԱՌԻԶՊ-ում սահմանված նպատակներին համապատասխան:

78. Ուսումնական տարվա վերջին ԱՌԻԶՊ-ի թիմն իրականացնում է ԱՌԻԶՊ-ի գնահատում, գրանցում է սանի կրթական առաջընթացը տվյալ տարվա ավարտի դրությամբ և մշակում է սանի անցումային պլանը՝ ներկայացնելով հաջորդ տարվա (օրինակ՝ կրտսեր խմբից միջին խումբ) համար առաջարկություններ:

9. ՄՀ ծառայությունների տրամադրումը Հանրապետական մակարդակում

79. Հանրապետական մակարդակում ՄՀ ծառայությունները տրամադրվում են ՀՄԿ-ի կողմից ՏՄԱԿ-ներին, ՆՈՒՀ-երին, այլ գերատեսչությունների համապատասխան բաժիններին, ԿԶԱՊԿ ունեցող երեխաներին, նրանց ծնողներին: ՀՄԿ-ն կարող է աջակցություն տրամադրել նաև երեխաների կրթության և պաշտպանության ոլորտում գործող շահագրգիռ կազմակերպություններին՝ իրենց նախաձեռնությամբ:

80. ՀՄԿ-ն իրականացնում է վերոնշյալ կառույցների կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր՝ վերապատրաստման դասընթացներ, մասնագիտական խորհրդատվություններ, աջակցող այցեր:

81. ՀՄԿ-ն ապահովում է ԿԶԱՊԿ-ի գնահատման ու ՄՀ ծառայությունների տրամադրման միասնական մոտեցումների կիրառումը՝ համակարգելով ՏՄԱԿ-ների աշխատանքը:

82. ՀՄԿ-ն մշտադիտարկում է ՏՄԱԿ-ների կողմից իրականացվող աշխատանքները՝ գնահատում, աջակցություն, խորհրդատվություն:

83. ՀՄԿ-ն ստեղծում է ԿԶԱՊԿ ունեցող երեխաների կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացմանը միտված մեթոդական գրականություն, դիդակտիկ նյութեր և ուսումնական նյութերի հարմարեցումներ: ՀՄԿ-ն փորձաքննության է ենթարկում ՏՄԱԿ-ների կողմից մշակված նյութերը: ՀՄԿ-ն փորձաքննության է ենթարկում շահագրգիռ կազմակերպությունների կողմից երեխաների կրթության կազմակերպմանը վերաբերող ծրագրերն ու մշակումները՝ իրենց նախաձեռնությամբ և տրամադրում համապատասխան եզրակացություն:

84. ՀՄԿ-ն համակարգում և վերլուծում է ՏՄԱԿ-ների կողմից Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների Տեղեկատվական համակարգ մուտքագրված տեղեկատվությունը:

10. Երեխայի անհատական թղթապանակը

85. ՄՀ ծառայությունն ստացող յուրաքանչյուր երեխայի համար, ՄՀ ծառայության տրամադրումը, կազմվում է անհատական գործի թղթապանակ (այսուհետ՝ Անհատական թղթապանակ), որը ներառում է երեխայի Նախադպրոցական և/կամ Տարածքային մակարդակների Գնահատման արդյունքների արձանագրությունները, եզրակացությունները, ԿԶԱՊԿ-ի վերաբերյալ վկայագիրը, ԱՌԻԶՊ-ն, երեխային տրամադրվող ՄՀ ծառայությունների ժամանակացույցը, երեխայի զարգացման վերաբերյալ հավաքագրած և արձանագրած ցանկացած տեղեկատվություն և դրա հետ կապված այլ նյութեր (լուսանկար, տեսանյութեր, երեխայի աշխատանքներ և այլն):

86. Երեխայի Անհատական թղթապանակի պատասխանատուներն են ՆՈՒՀ-ի տնօրենի ուսումնական գծով տեղակալը և ՏՄԱԿ-ի տնօրենի տեղակալը:

87. Երեխայի Անհատական թղթապանակի և նրա անձնական կյանքի տվյալները գաղտնի են և չեն փոխանցվում երրորդ անձանց՝ առանց ծնողի գրավոր համաձայնության: Տվյալների փոխանցումը երրորդ անձանց՝ առանց ծնողի համաձայնության, հնարավոր է միայն ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

_____ ՆՈՒՀ-ի տնօրեն՝

_____ -ին

ԴԻՄՈՒՄ

ԵՐԵԽԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

Հարգելի տնօրեն _____

անուն, ազգանուն

Ես՝ _____ ՆՈՒՀ-ի մանկավարժական
աշխատող _____ ս, պաշտոնը _____, իմ
սան՝ _____ ի նախադպրոցական կրթությունն առավել
արդյունավետ և որակյալ կազմակերպելու նպատակով խնդրում եմ սահմանված կարգով թույլ տալ
իրականացնել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի
Նախադպրոցական մակարդակի գնահատումը:

Դիմող՝ _____

անուն, ազգանուն

Ստորագրություն _____ Ամիս, ամսաթիվ, տարեթիվ _____

**ԵՐԵՒԱՅԻ ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Երեխայի անուն, հայրանուն, ազգանուն _____

Ծննդյան օր, ամիս, տարի _____ Ծննդյան վկայական N _____

ՆՈՒՀ-ի անվանումը՝ _____ Խումբ՝ _____

Լրացման ամսաթիվ՝ _____

«X»-ով նշե՛ք երեխայի նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքները.

	Ոլորտներ	Աջակցության կարիք չունի	Թեթև աջակցություն	Միջին աջակցություն	Մեծ հաճախականությամբ աջակցություն	Ամբողջական կամ մշտական աջակցություն
1.						
2.						
3.						
4.						
5.						
6.						
7.						
8.						
9.						
10.						
11.						
12.						
13.						
14.						
15.						
16.						
17.						
18.						

Խնդրում ենք ըստ ոլորտների նկարագրել երեխայի կատարողականությունը, ուժեղ և թույլ կողմերը, անհրաժեշտ միջավայրային հարմարեցումները՝ հաշվի առնելով Նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքում ստացված տվյալները:

1. _____

2. _____

3. _____

4. _____

5. _____

6. _____

7. _____

8. _____

9. _____

10. _____

11. _____

12. _____

13. _____

14. _____

15. _____

16. _____

17. _____

18. _____

Ստորագրություններ՝

Ծնող կամ օրինական ներկայացուցիչ՝ _____
 մանկավարժական աշխատողներ՝ _____

 մանկավարժահոգեբանական
 աջակցության խմբի մասնագետներ՝ _____

պաշտոն	ստորագրություն	անուն, ազգանուն
--------	----------------	-----------------

Ես՝ _____ս, մասնակցել եմ երեխայիս՝
 _____ի Նախադպրոցական մակարդակի գնահատմանը և
 տեղեկացել եմ գնահատման արդյունքների մասին:
 Ծնող՝ _____
 (ստորագրություն, անուն, ազգանուն)

ՆՈՒՀ-ի տնօրեն՝ _____
 (ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ (նախադպրոցական մակարդակ) N____

Երեխայի անուն, ազգանուն՝ _____ Ծննդյան օր, ամիս, տարի՝ _____

ՆՈՒՀ՝ _____ Խումբ՝ _____

Մանկավարժական աշխատող՝ _____ Ուսումնական տարի՝ _____

1. Նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքները՝ ըստ ոլորտների. (նշել բոլոր համապատասխան ոլորտները).

h/h	Ոլորտը	Ունի աջակցությ ան կարծիք	h/h	Ոլորտը	Ունի աջակցությ ան կարծիք
1.			2.		
